ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Նարինե Պետրոսյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության իրական հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի ավագ մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2023 թվականի հուլիսի 31-ից մինչև օգոստոսի 11-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Ֆինանսական ծրագրավորում և քաղաքականություններ» խորագրով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել է, թե ինչպես ախտորոշել մակրոտնտեսական անհավասարակշռությունները և կայունացման քաղաքականության համակարգված փաթեթի կիրառմամբ հարթել դրանք՝ մակրոտնտեսական կայունության հասնելու և այն պահպանելու համար: Դասընթացը ներառում էր չորս հիմնական տնտեսական հատվածների՝ իրական, հարկաբյուջետային, արտաքին և ֆինանսական հատվածների հիմնական ասպեկտները: Հիմնական շեշտը դրվել է այս ոլորտների միջև փոխկապակցվածության ըմբռնման վրա՝ ներառելով ինչպես հաշվապահական, այնպես էլ վարքագծային հարաբերությունները: Այս հասկացությունները լուսաբանելու համար իրականացվել է Վրաստանի դեպքի մանրակրկիտ ուսումնասիրություն՝ լայնածավալ տվյալների բազայի կիրառմամբ, վերջնարդյունքում իրականացվել է Վրաստանի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման բազային սցենարի մշակում: Դասընթացի էական բաղադրիչը եղել են գործնական սեմինարները, որոնք կազմել են դասընթացի ամբողջ ծրագրի երկու երրորդ մասը:

Ընդհանուր առմամբ, դասընթացն ուներ համապարփակ բնույթ և ընդգրկում էր մակրոնտեսական վերլուծությունների և դրանց հիման վրա քաղաքականությունների մշակման առանձնահատկությունների համակողմանի ընդհանրական նկարագրեր՝ արժևորելով վերջիններիս կիրառական նշանակությունը:

5. Քննարկված թեմաները՝

1. Ֆինանսական ծրագրավորում: Ընդհանուր ակնարկ
2. Մակրոտնտեսական հատվածների միջև կապերի բացահայտում,
3. Քանակական վերլուծություններ և կանխատեսումներ,

4. Մակրոտնտեսական վիճակագրության ներածություն: ՀՆԱ-ի վերլուծություն և կանխատեսում՝ ըստ առաջարկի և ըստ պահանջարկի: Պոտենցյալ ՀՆԱ և ՀՆԱ ճեղքի գնահատում,
5. Արդյունք, ծախսեր և գներ. վերլուծություն և կանխատեսում,
6. Վճարային հաշվեկշռի վերլուծություն և կանխատեսում,
7. Հարկաբյուջետային հատվածի ցուցանիշների վերլուծություն և կանխատեսում,
8. Հարկաբյուջետային քաղաքականության կիրառություն և վերլուծություն: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցություն,
9. Դրամավարկային հատվածի ցուցանիշների վերլուծություն և կանխատեսում,
10. Դրամավարկային և արժութային քաղաքականություններ: Դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմներ, արժութային ռեժիմներ, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների միջև կապեր,
11. Մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունություն,
12. Մակրոֆինանսական փոխառնչություններ,
13. Մակրոտնտեսական կարգավորման ծրագրեր" Բազային և ծրագրային սցենարների մշակում: Բազային սցենարում մակրոտնտեսական անհաշվեկշռվածությունների և խոցելիությունների բացահայտում, համապատասխան քաղաքականությունների միջոցով անհաշվեկշռվածությունների մեղմում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, ուսումնական խմբային խաղեր, պատրաստվել շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի մասնակիցների հետ: Միաժամանակ շնորհանդեսի միջոցով դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին ներկայացվել են դասընթացն ամփոփող և խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների, քննարկումների արդյունքները: Մասնավորապես, ներկայացվել է Վրաստանի տնտեսության ընթացիկ վիճակի գնահատումը՝ բացահայտելով տնտեսության խոցելիություններն ու անհաշվեկշռվածությունները, ինչպես նաև դրա հիման վրա մշակված բազային սցենարը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

15 օգոստոս, 2023թ.